15968

321·96
Q-83

Арм. 2-741a
15 JAN 2010
26 SEP 2006
321.96 Գ-83
2-741a
15-114.

ՄԱԿՍԻՄ ԳՈՐԿԻ

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱԶԱՏԵՆ ԻՐԵՆՑ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մ. ԳՈՐԿՈՒ ԴԻՄՈՒՄԸ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ և ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

ԹԱՐԳՄ. Ա. ՀՈՎԱՆՆԻՍՅԱՆԻ

Инв. № 22607

ԿՐԱՍՆՈԴԱՐ ,, 1930

21.03.2013

15968

Отпечатано
в типографии „Культура“
Краснодар, Красноармейская № 85.

ИЗДАНИЕ
НАЦСЕКЦИИ КРАСГОРКОМА ВКП (б)

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Ա. Մեսրոպյան անվան
անվ.

4624-87

Стф. ОСТ Б⁶ 125×176.
Красгорлит № 1261. Заказ № 521. Тираж 1000 экз.

Մոսկվայում բանվորների և գյուղացիների Միության սոցիալիստական խորհուրդների բարձրագույն դատարանը դատում է այն մարդկանց, վորոնք կազմակերպել էին դավադրություն բանվորագյուղացիական կառավարության դեմ։

Բոլոր յերկրների պրոլետարները, առանձնապես Անգլիայի և Ֆրանսիայի բանվորները պետք է հասկանան այդ դավադրության միտքը, նրանց նշանակությունը ձեզ համար, վորովհետև դուք ժամանակին պետք է գործ ունենաք նույնպիսի դավաճանների հետ, վորոնց դատում են այսոր Մոսկվայում։ Այդ մարդիք, վորոնք համարվում են տեխնիկայի մասնագետներ, Ռուսաստանից արտաքսված կապիտալիստների սպասարկու ծառաները խոստովանվեցին բանվորների դեմ գործած մի շարք սոսոր վոճրագործությունները։

Նրանք, ոգտագործելով գիտությունը և Խորհրդային Իշխանության հավատը, բոլոր միջոցներով վնասում էին սոցիալիստական շինարարության գործին, ինչպես նաև սոցիալիստական հասարակությանը։

Նրանք դժվարացնում էին Խորհուրդների Միության արդյունաբերության զարգացումը, փչացնում էին այն բոլորը, ինչ վոր հնարավոր է փչացնել, անտեղի և իզուր ծախսում էին միջոցները և աշխատավոր ժողովրդի ուժերը, ամեն կերպ աշխատելով վնասել յերկրի տնտեսության աճմանը և զարգացմանը։ Նրանք արհեստական կերպով ստեղծում էին Խորհուրդների յերկրում սննդամթերքների սով։ Բոլոր այն հանցագործությունները, գարշելի գործը, արվում եր նրանց կողմից նրա համար, վորպես զի քայքայեն Խորհրդային Իշխանության աշխատանքը, քայքայեն Խորհուրդների Միության տնտեսության զարգացումը, ստեղ-

ծել Միության մեջ քաոս, ժողովրդի մասսաներում, առանձնապես գյուղացիների մեջ առաջացնել անբավականություն Խորհրդային Իշխանության դեմ։

Այդ արվում էր համաձայնությամբ և ղեկավարությամբ այն ռուսական կապիտալիստների, վորոնք Ռուսաստանից փախչելով. պատսպարվել են Յեվրոպայում, իսկ ամենից շատ Փարիզում, և վորոնք ձգտում են վերականգնել իրենց իշխանությունը բանվոր դասակարգի և գյուղացիության վրա։

Հասկանալի յե, վոր ռուս գործարանատերերը և բանկիրները հույս չունեն վերադառնալ Ռուսաստան, զենված միայն իրենց բռունցքներով և գրպաններով։

Բոլոր կապիտալիստների գործը միևնույն գործն է ամբողջ աշխարհում։ Այդ գործը—բանվորների աշխատանքի անսահման շահագործումն է։ Այդ պատճառով, բնական է ռուսական կապիտալիստները՝ իրենց վոճրագործության մեջ Ֆրանսիայի և Անգլիայի կապիտալիստների շրջանում մեծ համակրություն գտան։

Պուանկարե—պատերազմը, Բրիանը, Չերչիլը, Բոլդուինը և այլ ավանտյուրիստները, վորոնք ծառայում են կապիտալին—մեծ ցանկությամբ ընդառաջ գնացին ռուսական գիշատիչներին և խաբեբաավազակներին։ Այն վնասարարների հետ միասին, վորոնց Մոսկվայում դատում է Ժողովրդի Բարձրագույն Դատարանը, նրանք մշակել են Խորհրդային Միության վրա զինվորական հարձակում գործելու ծրագիրը, ինտերվենցիայի ծրագիրը։ Վնասարարները իրենց ստոր, քայքայող աշխատանքները Խորհրդային Միության մեջ նրա համար են տարել, վորպես զի հեշտացնեն ինտերվենտների զորաբանակների ավազակային հարձակումը 1930-31 թ. Խորհուրդների Միության վրա։

Յենթադրվում էր պրովոկացիայի միջոցով պատերազմի հրավիրել Խորհրդային յերկիրը ընդդեմ Լեհաստանի և Ռումինիայի բանվորների, իսկ Ֆրանսիայի և Անգլիայի բանվորները հանդես գան իբր թե այդ յերկրները պաշտպա-

նելու համար, վորոնք, (Ռումինյան և Լեհաստանը) արդեն տնտեսապես ստրկացրել է խոշոր կապիտալի կազմակերպությունները և գիշատիչները։

Պատերազմը կապիտալիստների համար ձեռնտու յե, նրանք զենքի առևտուր են անում և բանվորների արյան գնով հարստանում։

Նրանք կանգ չեն առնում նոր պատերազմի սարսափների առաջ, թեև գիտեն, վոր այդ պատերազմը իր սարսափներով կ՚գերազանցի այն բոլորը, վոր յեղել է 14-18 թ.թ.։ Կապիտալիստները չեն ափսոսա վոչնչացնելու, կոտորելու ելի յերկու-յերեք միլիոն բանվորներ և գյուղացիներ։

Բոլոր կապիտալիստների գործը ամբողջ աշխարհում միևնույն գործն է։

Բանվորների և գյուղացիների գործը ամբողջ աշխարհում նույնպես միևնույն է. բանվորները և գյուղացիները պետք է ազատեն իրենց կապիտալի լծից, աղքատությունից և վոչնչանալուց։

Բանվորներ! արդեն ժամանակն է, պետք է հասկանանք, վոր բոլոր կարիքի, թշվառության, բոլոր դժբախտությունների և կյանքի հաշմանդամության աղբյուրը, դա—մարդկանց աննշան փոքրամասնության ագահությունն է, վորոնք վայրենացել են, դարձել են խելացնոր դրամական հարստություն կուտակելու տենչից, անպատիժ, անմտորեն իշխում են աշխատավորության մեծամասնության վրա, վոչնչացնելով յերկրի հարստությունները, վորը ձեզ է պատկանում։ Հիշեցեք, ինչպես չորս տարվա իմպերիալիստական պատերազմի ժամանակ ծովերում ջրասույզ արեցին միլիարդ տոնն մետաղ, վորը արդյունահանվել է ձեր ձեռքով, վոչնչացրվել են անթիվ անհամար քանակությամբ կաշի, գործվածքներ և ձեր աշխատանքի արդյունքի զանազան տեսակ մթերքներ։ Վոչնչացվում են հարստություններ, վորոնք պատկանում են ձեզ, ձեր յերեխաներին, բայց վոչնչացնելով այդ հարստությունները, աղքատացնելով ձեզ, կոտորելով միլիոնավոր

ձեր արյունակից և դասակարգի հայրերին և յեղբայրներին կապիտալիստները կուտակում են վոսկիներ։

Հարյուր հազարավոր բանվորներ կառուցանում են նավեր, վորոնք ջրասույզ են լինելու, պատրաստում են զենքեր և թնդանոթներ, վորոնք ծառայելու են վերջ ի վերջո ձեզ սպանելու համար։ Դուք նույնպես, ի հարկ է, պետք է սպանեք բանվորներին և գյուղացիներին, վորոնք մեղավոր չեն ձեր առաջ նույնպես, ինչպես և դուք մեղավոր չեք նրանց առաջ։

Զինելով կապիտալիստներին, դուք դրանով ձեր դեմ եք աշխատում, ձեր աշխատանքը պատերազմի համար — ինքնասպանություն է։ Ձեզ ուզում են ուղարկել կռվելու Խորհրդային միության բանվորների և գյուղացիների դեմ, վորոնք ցույց են տալիս ձեզ, թե ինչպես լավ կարելի յե ապրել և աշխատել առանց սեփականատերերի։

Բուրժուական մամուլը ամեն որ սուտ լուրեր է զետեղում և բամբասում Խորհրդային Միությունը, հնարելով զանազան հիմարություններ և սարսափներ. Նա այդ անում է նրա համար, վորպեսզի ձեր մեջ առաջ բերի կասկած Խորհրդային Միության բանվորների նվաճումների մասին, վորպեսզի ձեզ թշնամացնի Խորհրդային յերկրի բանվորների դեմ։

Բուրժուազիան ինքը շատ լավ գիտե, թե վորչափ մեծ են բանվորական շինարարության հաջողությունները Խորհրդների Միության յերկրում, վորչափ խոշոր են այդ հաջողությունները, չնայած ծախված հոգիների կազմակերպած վնասարարությանը։ Յեվ նա բուրժուազիան շատ լավ է հասկանում, թե ինչ վտանգ է սպառնում այդ հաջողությունները համաշխարհային կապիտալիզմին։ Բայց բուրժուական մամուլը — բուրժուազիայի կամակատար գործիքն է, բուրժուական լրագրողները — խոշոր մարդիկ են, նրանք չեն կարող ճիշտը խոսել, իսկ յեթե մի բոպե նրանք ցանկանային ճիշտ խոսել, լրագրների տերերը դուրս կ՛շպրտեին լրագրողներին փողոց այնպես, ինչպես գործարանատերերը դուրս են շպրտում ձեզ։

Կապիտալիստները գիտեն, յեթե Խորհուրդ. Միության բանվորները հասնեն իրենց նպատակին, — իսկ այդ նպատակը արդեն մոտ է, — դուք նույնպես կ՛հետևեք Խորհրդային Հանրապետությունների աշխատավոր ժողովրդի որինակին։

Ագահությունից ձեզ ներշնչում են ատելություն դեպի Խորհուրդ. Միության բանվորա-գյուղացիական իշխանությունը, վորովհետև Խորհուրդների յերկիրը — հսկա շուկա է, և այդ յերկիրը ունի հեքիաթային հարստություն։ Վախից ձեզ ներշնչում են ատելություն դեպի մեր յերկիրը, վորովհետև Միության բանվորները և գյուղացիները արագորեն և անդադար կապիտալիզմի գերեզման են փորում։ Կապիտալիստները ուզում են, վոր դուք գնաք մեռնելու հանուն նրանց իշխանության հաղթանակի, հանուն նրանց հարստանալու համար։

Խորհրդային Միության յերկրում մինչև անգամ յերեխաները և պիոներները արդեն գիտեն, վոր ամեն մի պատերազմ, բացի բանվորների պատերազմից ընդդեմ սեփականատերերի և աղաների, անմիտ վոճրագործություն է։

Դուք արդեն գիտեք, վոր 12 տարի առաջ Խորհուրդների Միության բանվորները և գյուղացիները հրաժարվեցին կռվել ձեր դեմ և համարյա անզեն, քաղցած, կիսամերկ ջարդեցին սպաների բանակները, վորոնց ղեկավարում եյին ուսում առած գեներալները, վորոնց հրաշալի զինել եյին Ֆրանսիայի և Անգլիայի կապիտալիստները։ Ներկայումս Խորհուրդների Միությունը ունի լավ զինված բանակ, վորի ամեն մի մարտիկը շատ լավ գիտե, վոր նա պետք է կռվի իր ազատության, յերկրի ազատության համար, ուր նա լիակատար տեր է, ուր չկան տերեր, բացի բանվորներից և գյուղացիներից։

Դուք պետք է կռվեք ձեզ թշնամի շահերի համար, կապիտալիստների շահերի համար, վորոնք ծախում են ձեր կյանքը և արյունը։

Կապիտալիստները միմյանց ծախում են յերկրից-յերկիր ձեր շինած զենքերը և կարող է պատահել, վոր ձեզ կսպա-

7891

2-741a

նեն այն թնթանոթներով և զենքերով, վոր ձեր ձեռքերով ե շինված և ձեր տերերի կողմից ծախվում են ձեր իբր թե «թշնամիներին»։

Նրանք զինվել են պատերազմի համար, վորը լինելու ե ավելի սարսափելի, քան 14—18 թ. թ. պատերազմը։ Նրանք նորից ցանկանում են վոչնչացնել և հաշմանդամ դարձնել միլիոնավոր մարդիք։

Կը ցանկանայիք, արդյոք, դուք այդ բանը։ Դուք և բոլոր մարդիք, վոր ընդունակ եք հասկանալու նոր հասարակական պատերազմի անմտությունն և վոճրագործությունն, կարող եք հարվածել ավանտյուրիստներին։ Դրա համար դուք ունեք բոլոր միջոցները։

Մասնավորապես դուք, Ֆրանսիայի և Անգլիայի բանվորներ, պետք եր պահանջեիք ձեր կառավարությունից, վորպես զի նրանք դուրս վռնդեին ռուս եմիգրանտներին և կապիտալիստներին, վորոնք ցանկանում են Խորհուրդների Միության բանվորներին և գյուղացիներին ծախ ձեր կապիտալիստներին։

Այդ պահանջը պետք ե ներշնչե ձեզ վոչ միայն բոլշևիկների պրոլետարիատի հաղթության դասակարգային զգացմունքը, այլ և ձեզ ոտար մարդկանց դեմ ինքնապաշտպանության հասարակ զգացմունքը, վորոնք կաշառելով ձեր տերերին և մինիստրներին խոստումներով—փայ տալ բանդիտների ձեռք բերած ավարից—պրովոկացիայի միջոցով ուզում են առաջ բերել նոր պատերազմ-սպանդանոց, վորին զոհ պիտի գնան միլիոնավոր կյանքեր։

Այդ պատերազմ-սպանդանոցի դեմ պետք ե բողոքեն բոլոր մայրերը, կանայք, քույրերը և հարսերը և այն ինտելիգենտ «հումանիստները» վորոնք որերումս բողոքում եյին պատժի դեմ, չհասկանալով թե վոր աստիճան գարշելի յեր այդ վոճրագործությունը։

ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0200842

Арм.
2-741а